ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ալիսա Մանվելի Սմբատյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ. 00.04 - «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ա.Մ.Սմբատյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության հարաբերակցության հարցերը մշտապես գտնվել են տեսաբանների ուշադրության կենտրոնում, ինչն էլ իր հերթին պայմանավորված է գործունեության այդ տեսակների իրականացման ընթացքում ծագող մի շարք խնդրահարույց հարցերով և իրավիճակներով:

Մասնավորապես՝ հստակ հայեցակարգային մոտեցման և օրենսդրական լուծումների բացակայության պատճառով մինչ օրս գործնականում խնդրահարույց են մնացել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին փոխանցելու, դրանք քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից օգտագործելու, քննիչի վարույթում գտնվող գործով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից իր նախաձեռնությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլատրելիության, քննիչի կողմից օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին կոնկրետ տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարում հանձնարարելու իրավաչափության հարցերը:

Հետազոտության թեմայի արդիականության խոսուն վկայությունն է այն իրողությունը, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով[1] օպերատիվ-հետախուզական գործունեությունը մասնակի ինկորպորացվել է քրեադատավարական գործունեության ոլորտ՝ ստանալով հետաքննություն անվանումը, սակայն բովանդակային առումով ներառելով նախաքննության

---

[1] ՀՕ-306-Ն՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին, առանձին բացառություններով ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ից :

ընթացքում գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից փորձ է արվել հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համալիր հետազոտել օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական գործունեության հարաբերակցության հիմնախնդիրները: Արդյունքում ատենախոսի կողմից մշակվել են ատենախոսության մեջ քննարկված գիտական հիմնախնդիրների լուծման հեղինակային մոտեցումներ, որոնք իրենց արտացոլումն են ստացել պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը և հավաստիությունը նույնպես կասկած չեն հարուցում, քանզի հետազոտությունը կրում է համալիր բնույթ, հեղինակի կողմից օգտագործվել են գիտական հետազոտության տարբեր մեթոդներ, հետազոտությունը հիմնված է հայրենական և արտասահմանյան քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի, վիճակագրական տվյալների, թեմային վերաբերող գիտական աշխատությունների և պարբերական հրապարակումների նյութերի օբյեկտիվ վերլուծության վրա:

Ատենախոսությունում հիմնավորված տեսական դրույթները հարստացնում են քրեական դատավարության իրավունքի և օպերատիվ-հետախուզական գործունեության տեսությունը հետազոտության առարկայի վերաբերյալ գիտելիքներով, դրանք կարող են ծառայել որպես հուսալի որոնողական բազա ՀՀ քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ մշակելու համար:

Գործնական առումով դրանում տեղ գտած առաջարկությունները կարող են օգտագործվել՝ ի նպաստ օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանը:

Ընդհանուր առմամբ գնահատելով Ա.Մ.Սմբատյանի հետազոտության արդյունքները՝ կարելի է հավաստել, որ առավել տեսական և գործնական նշանակություն ունեն դրանում տեղ գտած հետևյալ գիտական դրույթները:

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության նորմատիվային հասկացության հեղինակային սահմանումը, որպիսին օպերատիվ-հետախուզական գործունեությունը չի նույնացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետ:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակների և խնդիրների տարանջատումը, որպիսի լուծումն ունի կարևոր գործնական նշանակություն, քանզի գործունեության այդ տեսակի խնդիրների հստակ օրենսդրական ձևակերպման պայմաններում է միայն հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ճիշտ գնահատական տալ իրականացված օպերատիվ-

հետախուզական միջոցառման իրավաչափությանը, այդ թվում՝ անձի իրավունքների և ազատությունների նկատմամբ միջամտության համաչափությանը:

3. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում հետաքննության ընթացքում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները որպես քրեական վարույթ հարուցելու հիմքեր նախատեսելու անհրաժեշտության մասին եզրահանգումը:

Ա.Մ.Սմբատյանի ատենախոսությունում հիմանվորված են նաև մի շարք այլ առաջարկություններ, որոնք, անկասկած, առանձնանում են նորույթով և ունեն կարևոր տեսական և կիրառական նշանակություն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության համար:

Այդ ամենը հիմք է տալիս դրական գնահատելու Ա.Մ.Սմբատյանի հետազոտական աշխատանքը, որն օժտված է արդիականությամբ, նորույթով, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությամբ:

Իհարկե, իրավաբանական գիտության և պրակտիկայի համար այդքան բարդ հարցերի լուծումը չի կարող բացարձակ հարթ լինել, այն անխուսափելիորեն հարուցում է նաև որոշակի դիտողություններ և նկատառումներ: Մասնավորապես՝

— 1. Համաձայնվելով հեղինակի այն մոտեցման հետ, որ օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացության նորմատիվային բնորոշման մեջ գործունեության այդ տեսակի նույնացումն օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետ անընդունելի է, այդուհանդերձ, ընդունելի չենք համարում օպերատիվ-հետախուզական գործունեության նորմատիվային հասկացության հեղինակային բնորոշման մեջ գործունեության այդ տեսակի բաղկացուցիչների շարքում մեթոդների ներառումը, քանզի մեթոդները կարող են վերաբերել օպերատիվ-հետախուզական գործունեության բաղկացուցիչներին, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներին, օպերատիվ-հետախուզական գործունեության մաս կազմող այլ գործողություններին, սակայն ինքնին չեն կարող դիտարկվել որպես օպերատիվ-հետախուզական գործունեության մաս:

— 2. Գտնում ենք, որ թերի է ձևակերպված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածը քննչական խմբում օպերատիվ աշխատակիցների ներգրավելու մասին դրույթով լրացնելու մասին հեղինակի առաջարկը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննչական խմբում նաև օպերատիվ աշխատակիցներ ներգրավելու իրավական հնարավորության նախատեսմամբ անխուսափելիորեն պետք է կարգավորվեն մի կողմից խմբի ղեկավարի և խմբի քննիչների, մյուս կողմից խմբում ընդգրկված օպերատիվ աշխատակցի (աշխատակիցների) փոխհարաբերությունները, քանզի «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի գործող խմբագրությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են օպերատիվ-

հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա (բացառությամբ դատարանի թույլտվությամբ կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների), իսկ նման որոշում կայացնելու հիմք են դատախազի գրավոր ցուցումները և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի կապակցությամբ տրվող գրավոր հանձնարարությունները, քննիչի, հետաքննության մարմնի, դատարանի որոշումները՝ իրենց վարույթում գտնվող քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը (տես՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը): Հետևաբար քննչական խմբում օպերատիվ աշխատակիցների ներգրավման դեպքում պետք է հստակ լուծում ստանան նաև այն հարցերը, թե այդ խմբում գործող օպերատիվ աշխատակիցն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու է բացառապես քննիչի հանձնարարությա՞մբ, թե՞ նաև իր նախաձեռնությամբ, և եթե բացառապես քննիչի հանձնարարությամբ, ապա միայն քննչական խմբի ղեկավարի՞, թե՞ նաև խմբում ընդգրկված այլ քննիչների:

3. Հիմնավորված չենք համարում հեղինակի այն պնդումը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների համաձայն՝ օպերատիվ աշխատակիցն իրավունք ունի հարուցել քրեական գործ, իսկ հետաքննության տեսուչն իրավունք ունի իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որը վերջնարդյունքում բացասաբար է անդրադառնում առանձին վերցված յուրաքանչյուր սուբյեկտի աշխատանքի վրա (տես՝ աշխատանքի 54-55-րդ էջերը): Կարծեք թե հեղինակի կողմից նման պնդում անելու հիմք է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված իրավադրույթն առ այն, որ հետաքննության մարմինը հանցագործությունները և դրանք կատարող անձանց բացահայտելու, հանցագործությունը կանխելու և խափանելու նպատակով ձեռնարկում է համապատասխան օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումներ: Սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային, ինչպես նաև նույն օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համեմատական վերլուծությունից հետևում է, որ օրենսդրորեն տարանջատված են հետաքննության մարմնի քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական գործառույթները և որ դրանք իրականացնում են օրենքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի տարբեր աշխատակիցներ: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգքրի 6-րդ հոդվածի 27-րդ կետի ուժով հետաքննության

մարմին է նույն օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը (այսուհետ՝ հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցները, որպիսի իրավակարգավորումից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի ոչ թե բոլոր, այլ միայն համապատասխան ստորաբաժանման պետը և աշխատակիցներն են լիազորված իրականացնելու հետաքննություն: Իսկ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով էլ հետաքննության մարմինների հետ նույնացող օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրենց կառուցվածքում պետք է ունենան համապատասխան ստորաբաժանումներ, որոնց վրա է դրված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը: Թեև ընդունում ենք, որ գործնականում ևս առկա է թյուրըմբռնում հետաքննության մարմնի միևնույն աշխատակցի՝ միաժամանակ և՛ քրեադատավարական, և՛ օպերատիվ-հետախուզական լիազորություններով օժտված լինելու վերաբերյալ, սակայն այդպիսին հետևանք է ոչ այնքան իրավակարգավորումների անկատարության, որքան դրանց ոչ ճիշտ մեկնաբանման:

4. Թեև ատենախոսի կողմից հետազոտության շրջանակներում անդրադարձ կատարվել է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես ապացույց օգտագործելու հիմնահարցերին, սակայն, գտնում ենք, որ այդ հիմնահարցերի առավել խորացված հետազոտումն առավել արժեքավոր կդարձներ աշխատանքը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հիմնահարցերի վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում (տես՝ ի թիվս այլնի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14 գործով, 2018թ. հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0189/01/17 գործով, 2019թ. ապրիլի 11-ի թիվ ԵԿԴ/0229/01/16 գործով որոշումները):

Միևնույն ժամանակ, նշված դիտողություններն ու նկատառումները չեն նշանակում, որ ատենախոսի կողմից առաջարկված այս կամ այն լուծումը սխալ է: Այդ դիտողությունները մասնավոր, իսկ երբեմն՝ վիճահարույց բնույթ են կրում:

Ամբողջությամբ վերցված՝ պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է այն պահանջներին, որոնք ներկայացվում են թեկնածուական ատենախոսություններին Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով: Ատենախոսության հիմնական դրույթները պատշաճ փորձարկում են անցել: Դրանք արտացոլված են հեղինակի թվով տասներկու գիտական հոդվածներում:

Հետևություն. Ալիսա Մանվելի Սմբատյանն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00.04 - «Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական

դատավարություն, վարչական, դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)» մասնագիտությամբ:

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Կ.Ա.Բիշարյան

23.05.2022թ.

Հաստատում եմ Յ. Պետրոսյանի ստորագրությունը
ՀՊ. Հովհաննիսյան